

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-5-8-Ա

ք. Երևան

25.05.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի մայիսի 25-ի նիստում քննարկեց 2021 թվականի մայիսի 6-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ FLO MAĞAZACILIK VE PAZARLAMA ANONİM ŞİRKETİ (Merkez Mah. Taşocağı Cad. No:24 Kat:3, Mahmutbey Bağcılar İstanbul, TR) ընկերության «LUMBERJACK» (IR1499783) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 3-րդ մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 8-րդ ենթակետի, 96-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը վերարտադրում կամ պարունակում է պետական զինանշաններ, դրոշներ կամ խորհրդանիշեր, պետությունների պաշտոնական անվանումներ կամ դրանց կրճատ ձևը, միջազգային և միջպետական կազմակերպությունների լրիվ կամ կրճատ անվանումներ, պաշտոնական խորհրդանիշեր, պաշտոնական վերահսկողական, երաշխիքային և հարգորոշիչ դրոշմներ, կնիքներ, պարգևներ ու այլ տարբերանշաններ (Փարիզյան կոնվենցիայի 6-եր հոդվածի համաձայն) կամ շփոթելու աստիճան նման է դրանց: Նշված նիշերը, բացառությամբ պետությունների պաշտոնական անվանումների, դրանց կրճատ ձևերի և շփոթելու աստիճան նման նիշերի, կարող են ներառվել ապրանքային նշանի մեջ որպես չպահպանվող տարրեր, եթե դրանք գերիշխող մաս չեն զբաղեցնում, և եթե առկա է համապատասխան իրավասու մարմնի թույլտվությունը: Տվյալ դեպքում հայտարկված համակցված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ դրա պատկերային տարրը

շփոթելու աստիճան նման է Կանադայի դրոշին, հետևաբար ապրանքային նշանի մեջ այն ներառելու համար անհրաժեշտ է ստանալ համապատասխան իրավասու մարմինների թույլտվությունը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու և կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու վերաբերյալ, քանի որ հայտարկված ապրանքային նշանի պատկերային տարրը միանշանակ չէ, որ շփոթելու աստիճան նման է Կանադայի դրոշին: Հետագա քննարկման ընթացքում խորհրդի մյուս անդամները պնդեցին, որ հայտարկված ապրանքային նշանի պատկերային մասը շփոթելու աստիճան նման է Կանադայի դրոշին, հետևաբար ապրանքային նշանի մեջ այն ներառելու համար անհրաժեշտ է ստանալ համապատասխան իրավասու մարմինների թույլտվությունը:

Բողոքարկողը պնդում էր, որ հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման չէ Կանադայի դրոշին:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 3 կողմ և 4 դեմ ձայների հարաբերակցությամբ:

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «LUMBERJACK» (IR1499783) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում: